

45249

649

604

45249

3

XIV 4099



Ն Ո Ւ Է Ր

Պ. ԿՕԼԼԵԺՍԿԻ ՍԵԿՐԵՏԱՐ ԱՆՈՒՅՑ  
ՄԱԿԱՐԻՉ ԶԱՇԻՏՈՎԻՆ

418

54249

Ամենայն զգուանքով և արհամարհանքով կարգացրինք այն ծիծաղաշարժ և խայտառակ բրօշուրը <sup>1)</sup>, որը հրատարակել է Նորաշէնու Սուրբ Մարիամեան օր. դպրոցի հոգաբարձու թիւնը: Թէև, և հարկէ, ոչ ոքի պատիւ չէր բերել պատասխանել մի այդպիսի ծանծաղամիտ և հայհոյանքներով լի գրուածքին՝ մանաւանդ որ դա պ. Իգմիրեանցի հեղինակութիւն է սակայն՝ ճշմարտութիւնը վերահանգնելու համար, բոլորք համարեցի քանի մի տողով, իրանց արժանի պատասխանը <sup>2)</sup> տալ:

Անշնորհք ճարտասան Իգմիրեանցի հեղինակած անկապ և կոշտ ու բռն սխալներով լի գրուածքը կարելի է բաժանել 3 մասը:

1. Գովասանութիւն, 2 ստոր գրպարտութիւն և 3 յիմար յոյս:

Հոգաբարձու Իգմիրեանց, փակ դռնով քննութիւն անելուց յետոյ ինքն իրան գովում է, որ աշակերտութիւնները շատ յառաջադէմ էին ամեն առարկաների մէջ, բացի կրօնից, հայրենագիտութիւնից և գծագրութիւնից: Թուարանութեան վերայ խօսելիս, էլ չէ իմանում թէ ինչպիսի ամսականներ գործածէ իրենց նախաձեռնեցիկ հեղեան տեսչին գովելու համար և ասում է ա. և բ. դառատունների օրիորդները Թուարանութեան մէջ, այնքան գերազանց և ամենահիանալի էին, որ ասիստէնտները (ինքը) զարմացած էին նրանց մտաւոր զարգացման վերայ (երևի, իրենի հետ համեմատելով, շատ հաւանական է): Որովհետև լաւ էին անգլիւ արեւ, Զալիտեանցի վերջին մանկավարժական եղանակով աւանդած թուերի կարգը և դասը և ջրի պէս ասում էին «դաս միաւորաց, դաս հագարաւո-

<sup>1)</sup> Բրօշուրը փողոց փողոց բաժանուէին Տեսուչ Զարեանանը և երկգ-փոխան նոյն ինքն Հոգաբարձու Ստեփանեանը:

<sup>2)</sup> Մեր պատասխանը դարձնում ենք պ. Իգմիրեանցին՝ իրեն այդ խ. և. և այլ գրուածքի հեղինակին:

3

րաց, միլիոնաւորաց... Այն ինչ սրա նախորդ պ. Յարոյի ժամանակը հազար թուանշանից աւելի չէին կարողանում գրել: պ. Յարոն թուարանութիւն չէ դաս տուել, ուրեմն թնչ կարեք կար նրան էլ գիպել, երևի, նրա բրօշերը դեռ էլի ստալում է Իգմիլեանցի և Ջաշտեանցի ուղեղներում: Յետոյ գովում է ամենքին առանց բացառութեան (միով բանիւ ամենքը յառաջադէմ էին, թոյլ չկար բացի դուրս գնացող ուսուցիչներէն) և դարձեալ Ջաշտեանին միայն այս անգամ առանց գերադրական անականներէ, այստեղ արդէն ամաչում է խոստովանել, որ Ջաշտեանց, ինչպէս երեք տարուայ փորձը ցոյց տուեց, միանգամայն տգէտ է Ռուս լեզուի դաս տալում, չէ որ ինքը Իգմիլեանց նրան միշտ նշանակում է 2 (թոյլ) այս դարոցում մինձ վարժապետ Իգմիլեովը, բացի աշակերտուհիներէն, քննութեանը ուսուցիչներին էլ է թուանշան գրում: Իսկ երբոր Ջաշտեան լալիս է, մի լաչ էլ է աւելացնում: Ամենքին գովելով պ. Իգմիլեանց չէ մոռանում և իր տ. Իգմիլեանցին, սրան էլ գովում է որ աշխատասէր երևեցաւ կարերի վերայատուութեան (վերահասու) մէջ: Չ'նայելով որ իր կ'ի նը ամբողջ տարուայ ընթացքում դարոցի երես չէ տեսիլ:

Ուստի հոգաբարձութիւնը գնահատելով ամենեցունց անխոնջ աշխատութիւնը, սրբազան պարտք համարեց իրան՝ օրագրաւ շնորհակալութիւն յայտնել պ. Ջաշտեանին մասնաւորապէս. իսկ միւսներին առհասարակ, վարձատրելով օր. Մատինեանցին ոսկէ ժամացուցով իսկ Ջաշտեանին վերադարձուցանելով իր սուտ հրատարականը, առաջարկել (թէ պատուիրել) շարունակել իր պաշտօնը չ'նայելով իր վերայ գրած ճշմարտութեանը: (Եթէ ոչ Ջաշտեանը շատ քնքոյր գգացմունքի տէր լինելով, գլուխը մահուէր տալի և չէր մնում): Այսպէս մանրամասն հաշիւ տալուց յետոյ, չէ յայտնում թէ, վերջը փոսոնով տօնել են այդ օրը, թէ ոչ:

Եարունակում է հաշիւ տալ. որոնք փոխեցին, արձակուեցան, և ի միջի այլոց էլ ասում է. չորս աշակերտուհի աւարտեցին վկայականներով (!) իսկ միւսները մնացին համաձայն կանոնադրութեան գարոցիս (ինչ կանոնադրութիւն, կանոնադրութիւն որ ունենաք հո, մէջը գրած կը լինի թէ հոգաբարձուները քանի տարով են ընտրած): Այդ կանոնները Ջաշտեանի նիսիի դաւթարումն է գրած, որովհետեւ վախենալով, որ թուի սակաւութեան պատճառաւ որ և է դասատուն փակուի և ինքը կամ ուռնիկը գրկուի կամ տեսչութիւնից, դիտամբ երբորդ տարին է պահում և բժացնում խեղճ երեխանցը: Իսկ նա այնքան սալած է տեսուչ

բառից և այնքան յաճախ կրկնել էր, որ երեխայքը «պ. Տեսուչեան» էին կոչում: Իսկ եթէ այդ չորսն էլ կամենան մնալ երբորդ <sup>1)</sup> տարին (որ շատ ողորմութիւն կ'անեն Ջաշտեանցին). նրանց կը պարապեցնեն հայերէնով, թուարանութիւնով, կոստրակներով և կարուձևով: (Սալիս պարոն հոգաբարձու, որ մինչև հիմի կարծում ես թէ թուարանութիւնը և կոստրակները գանազան գիտութիւններեն:) Կադմելով մասնագիտական դասատուն... երբորդ պատրաստականից յետոյ մասնագիտութիւն. (այս արդէն Իգմիլեանցի և Ջաշտեանի խելքի բանէ):

Ուսուցիչներին գովելուց յետոյ հիմի իրանցն է գովում, ինչ անէ խեղճը, տեսնում է որ իրան գովող չկայ, տարին մի անգամ դուրս է գալիս հրապարակ և ինքն իրան գովում: Սկսում է պատմել իրանց սխրագործութիւնները թէ ինչպէս իրանք ընդունել են այդ դարոցը շատ աննախանձելի դրութեան մէջ, 14 աշակերտով, 1 ուսուցչով Գիվանեանց (ամօթ չէ, մինչև հիմի ծառայում էք միասին և նրա ազգանունան գրելը չգիտէք (Մղեանեանց) և 250 բուբլի պարտքով, որ և վճարել են այրուհի (նոր բառ սա ու Ջաշտեանցը, որ գլխները իրարու տան Հալիագեան Բառարան կը շինեն) այրի Եանշեանցին (իսկ թէ ում գրպանից յայտնի չէ): Թէ իրանք օգնել են դարոցին դասատուութեամբ, (երևի հայերէնը Իգմիլեանց էր դաս տալի:) և իրանց աշխատութեամբ հասցրին ամենաձաղկեալ դրութեանը: Թէպէտ մի քանիսը հեռացան վախենալով որ ամօթախած չ'լինին, (ամօթով չ'մնան) բայց իրանք չվախենալով ամօթից (շատ ճշմարեւ է) մնացին և կարացին (կարողացան) բանը էն տեղ հասցնել, որ 1879 (սուտ է—1880.) դըպրոցը հրատարակեցին ձրիավարժ և մի քանիսին էլ թուղթ և գրէչ էին տալիս, այնպէս որ վերջերս Ջաշտեանի փողոց փողոց գրէչ էին տալիս, այնպէս որ վերջերս Ջաշտեանի փողոց փողոց ման գալուց երեխանցը թիւը հասաւ 135-ի: Եստ պարզ բան է, հնարք կար փող և ստանալու չ'ստացանք, ո՞վ էր ախմախացել համ փող տար համ երեխին յանձնէր Ջաշտեանի խնամքին: Տեսաք, որ ինչպէս 14 աշակերտով ընդունել էք էնպէս էլ ճիշտ հաշուով պիտի յանձնէք դըպրոցը և փակուի, Ջաշտեանցը իր ուռնիկից և պաշտօնից չ'գրկուելու համար, փորձ փորձեց ձրի հրատարակել և յաջողուեցաւ Տիխիսեցիք մուֆտայի ձայն լսեցին եկան

<sup>1)</sup> Օր. Ղորգանեանց անցեալ տարի Ջաշտովի խնդրանքը մնաց երկրորդ տարին. իսկ Թորոսեանց, Ներսիսեանց և Բայանդուբեանց մնացին իրեն թոյլեր:

Թափեցան: Չաշխտեանցը ոչ թէ միայն գրիչու թուղթ, այլ և ճաշ, ու շոր էլ կտայ, միայն թէ նրանք, չհեռանան և իրան տեսչու-  
 Թիւնից չ'զրկեն: Որովհետև երկար ժամանակ մուսացութեան մէջ  
 մնալուց յետոյ, հազիւ մի տեղ է ճանկել, ամեն հնարք գործ է  
 դնում որ երկար ծառայի:

Հոգաբարձութիւնը դպրոցը ապահովեց հետագայ (յետագայ)  
 միջոցներով: Ա. Նորաշէնի գաւթում, եկեղեցական փողից, Վեհա-  
 փառի հրամանով երկհարկանի (յարկանի) տուն շինուեցաւ, փալ-  
 ւաբաշին էլ յտեփանեանցն էր: Իզմիրեանցին թնչ: «Հազար մա-  
 նէթ պարզեց թամամշեանը, որ և մտաւել է, այս տարի ևս  
 ներքևի յարկում սենեակներըց մէկն կրկին իւր ծախսով սուաղել  
 տայ, որ դառնայ այնուհետև դասատուն:» Մենք գարմանում ենք  
 թէ թամամշեանցի բարերարութեամբ ինքն թնչի է պարծենում:  
 Միակ մարդը, ձեր մէջ, որ գործում է առանց կրքի ա. թամամ-  
 շեանցն է, որը շատ հազարներ կ'ընծայի գործ էլ կ'ընէ, ափսոս  
 որ ձեզպէսներ ձէջն է, որ շատ գցուացրել էք ձեր ինտրիգանե-  
 րով: Բ. Աւելի ապահովուեցաւ, երբ Ղուզանեանցը կտակեց իր  
 քարվանսարայի 1/4 մասն, որի համար աշխատեց հանդուցեալ  
 Նորաշէնի (խեղճ Նորաշէն, երանի դու էլ մտաւորապէս ես հան-  
 դուցեալ, ուրիշներն նման,) առաջ քահանայ Տէր Սրապիտնը: Գ.  
 էլի ապահովուեց երբ ա. Իզմիրեանց ընծայեց իրա տունը: Գ.  
 բացի սորա (բացի սորանից) եկեղեցին էլ, համաձայն ընդհանուր  
 կարգադրութեան Վեհափառի վճարում է 20 ռուբլի փոսական:  
 Այս քսան ռուբլու համար չ'զիտենք ումանից լինենք շնորհակալ,  
 փողովդղից,— որ տալիս է, Վեհափառից որ ընդհանրապէս կար-  
 դադրել է (և ոչ թէ միայն Նորաշէնի դպրոցի համար, թէ չէ  
 կ'ասէր ես աշխատեցի) թէ Իզմիրեանցից, որ քրտնաջան աշխա-  
 տում է իրան գովել:

Յետոյ հաշիւ է անում (ախար մատիմատիկոս է) որ եթէ այս  
 կալուածներն արժէքը հաշուէ սովորական 7%-ով (Չաշխտեանցին  
 էլ հարցրու է,) այն եզրակացութեան կ'գայ որ իրանք վաստա-  
 կել են աւելի քան 34,000 ռուբլու <sup>1)</sup> կայք: Այս հաշուով իր եղ-  
 բոր տունն էլ արժէ 17,000. և ոչ 7,000 ինչպէս ասել է «Մեղուի»  
 յօդուածագիրը: Շատ սխալ է, եկեղեցին ընդունել է ձեր տունը

<sup>1)</sup> Չորաջար սխալումէք, Ձեր տունը բերումէ 1,200 մանէթ Ղուզա-  
 նեանցի կալուածքից ստացվումէ 700. ընդամենը 1,900. հաշուելով 7%  
 կ'արժենայ 27,000. և ոչ 34,000:

ինչպէս երևում է գործից 9,480 ռ. 91 կոպէկ պարտքով, որ և տարէ-  
 ցտարի Պրիկազին վճարել է 1878-ից—ց 1881-ն այսինքն մինչև  
 ազատելը, միայն տոկոս աւելի քան 2,528 ռ. ձեր տունը բերում  
 էր 900 ռ. հանելով ապահովագրութեան, գնահատական, քարելու  
 և այլն ծախսերը կ'մնայ մօտ 650 ռ. յիշեալ ժամանակամիջոցում  
 (1878-ց 1881-ն) ձեր տանից ստացուել է մօտ 1,950 մանէթ, հա-  
 նելով եկեղեցու վճարած տոկոսից կ'իմանանք, որ խեղճ եկեղեցին  
 էլի տուժել է 578 ռ. սրան աւելացնենք հաստատութեան  
 ծախսը մօտ 400 ռ. կ'ընին 978 ռ. այս գումարը աւելացնենք եկե-  
 ղեցու վճարած 9,480 ռ. 91 կոպէկ պարտքի վերայ, կ'գանք այն  
 եզրակացութեանը, որ եկեղեցին ձեր տան վերայ ծախսել է ոչ թէ  
 7,000 ռուբլի ինչպէս մենք ասել էինք, այլ 10,458 ռ. 91 կոպէկ:  
 Ձեր տունը բերում է 1,200 ռուբլի, հանած ծախսերը կ'մնայ 950  
 ռուբլի, եթէ հաշուենք ամենավերջին 10%-ով (որովհետև հիմն  
 տները միշտ բերում են 10—12%) կ'իմանանք, որ ձեր տունը  
 արժէ 9,500 ռուբլի: Ուրեմն եթէ 9,500 ռուբլիանոց տան համար  
 եկեղեցին վճարում է 10,478 ռ. 91 կոպէկ, էլ ընծայաբերութիւնը  
 ուր մնաց, կամ եթէ սրան ընծայել էք ասում. ծախելն էլ ինչին  
 էք ասում: էլ ինչ կարելք կար խալխի աչքերումը թող փշել և ա-  
 կանջներումը գուռնայ անել, բրօշուրով դուրս գալ, հրատարակել  
 թէ Իզմիրեանցը 17,000 ռուբլիանոց տուն ընծայեց: է՛յ ա. Իզմիր-  
 րեանց անցաւ էն միամտութեան դարը, Տիխիսի քոռ ժամանակը,  
 երբ իրա՞ կարող էիք, էդպիսի գուռնայով միամիտներին պար  
 անել, այն դարումը ձեր Չաշխտեանցն էլ մի ուսուցիչ էր, դասեր  
 ունէր իսկ հիմն արխիւումն է յանձնած: Եթէ չէք հաւանում կամ  
 հաւատում, թէ իմ հաշիւներն թէ իմ գնահատութեանս, համե-  
 ցէք, գնացէք Պրիկազը և էնտեղից վաւերացրած հաշուէպատ-  
 ճէններ հանեցէք ու հրատարակեցէք, եթէ ոչ դատարկ խօսքերով  
 ասել թէ 17,000 արժէ, ո՞վ կը հաւատայ:

Այդպիսի տասն հազարները թնչ կ'օգնեն (թէկուզ իրաւ էլ  
 ընծայած լինիք) երբ որ մտաբերենք ա. Երկիցեանի իր դասախո-  
 սութեան ժամանակ արտասանած խօսքերը (տարած է Արձագանք  
 շարթաթաթերթում) «Գ. Իզմիրեանցի 100,000 մանէթանոց ազ-  
 գային կտակը, նրա ժառանգները քանդեցին մի ստորակէտով, և  
 հայ ազգի անթիւ որբ ու անտէր մանուկներին գրկեցին իրանց  
 բարերարի կտակից: Այն ժամանակ ձեր բարերարութիւնը նման  
 կ'ընին այն մարդու արարքին որ անյայտ ճանապարհով ձեռք բե-  
 րած եզր ամբողջապէս կերաւ, կաշին էլ դարադ-խանումը ծա-

խեց, իսկ չորս ոտը աղքատներին բաժանելով, կարծում էր, հոգուն վրկութիւն կ'գտնի:

Եթէ եկեղեցու անուամբ իր տասն հազարով գնուէր մի կալուած, եկեղեցին կ'ստանար դարձեալ 1,000 ըուբլի, ձեռ չէր արժանացնի բարերար տիադոսին և դպրոցն էլ կ'ազատուէր ձեր կրօնին զոհ գնալուց:

Յետոյ խօսելով դպրոցում աւանդուող առարկաների մասին, ինքն իրան գտնում է որ շատ բաւական է, բայց մի երկու տողից յետոյ, ինքն ու իր Ձաշխտեանցը խելք խելքի տալուց յետոյ ահամայ գալիս են այն եզրակացութեանը, որ պէտք է կատարել մեր առաջարկութիւնը այսինքն պրօգրամը հարմարացնել (յարմարեցնել) Գայիանեանի հետ: Իսկ այդ միտքը արծարծելը և իրագործելը մեզ արժան չը նստեց: Միխիթարականը այն է, որ թէ և մենք հիւսացել ենք ասպարէզից, բայց մեր առաջարկութիւնները վճռվում են մեր թշնամիներէից: Մենք գլխաւորապէս առաջարկել էինք երկու միտք. նախ դպրոցը ըստ ուսումնական մասին կառավարել ուսուցչական ժողովներով և ոչ թէ ենթարկել Ձաշխտեանի վայրենի կամայականութեանը: Այս հարցը վճռուեց մեր ժամանակը: Երկրորդ պրօգրամը յարմարեցնել Գայիանեանի կամ Օնանեանի գալրոցների պրօգրամների հետ, այնպէս որ մեր 3-րդ պատրաստականից աւարտածը ընդունուի այդ դպրոցներէից մէկի կամ միւսի առաջին դասատանը: Այս հարցն էլ սկզբունքով վճռուել է իսկ թէ որքան կարող է իրագործել երեւելի մանկավարժ Ձաշխտեանը, այդ այլ հարց է: Իրենց դպրոցը գովելով (ո՞վ իր թանին թթու կ'ասի) ասում է «Նորաշու Մարիամեան դըպրոցը գանազանվում է ոչ միայն նրանով որ սա մի ա կ և բոլորովին ճիշտվարժ դպրոց է Տփլիսում, այլև այն պայմանով, (պայմանս որն է) որ սա մի ա կ բ ա ր ե կ ա ր գ ա ծ, ա պ ա հ ո վ ա ծ, բ ա ր ե գ ո թ ա կ ա ն և ժ ո ղ ո վ ը դ ա կ ա ն դպրոց է. որովհետև միւս դպրոցները կառավարվում են ընկերութիւններով որ չաւարարի Մարիամեան և Գայիանեան և Օնանեան դպրոցները: Եւ յետոյ Գայիանեան դպրոցում գործող խմբի հինաւորաց ջիգրը հանում է, իբրև դպրոցի վարկը վայր ձգելու և վնասելու մտքով ասում է, փողերը բանկումը պահվում է ոչ թէ եկեղեցու այլ երեւնց ընկերութեան անունով: Գայիանեան դպրոցի կանոնադրութիւնը հաստատած է Վեհափառ Կաթողիկոսից, ուրեմն երբ որ մի բան Վեհափառը բարեհաճել է հաստատել, կը նշանակէ օգտաւէտ է գտել, դուք չ'պէտք է խօսէք: Երկրորդ կը գրէք այդ

բանը. եթէ այն փողից դուք էլ իբրև անդամ մասն ունենայիք, է հարկէ չէ. վասնորոյ ես ձեզ պատասխանում եմ. դուք է զուր տեղը իշտահներուդ մի բացանէք Ձեզ Գայիանեան դպրոցում մօտիկ չեն թողնել: Յետոյ սկսում է մի գլխնական հայեացք ձգել թէ ինչիցէ յառաջանում այնքան տարաձայնութիւնները <sup>1)</sup> որովհետև այս վերջին տարիները մի քանի անհեռատես անձինք «Մեղու» և «Մշակ» <sup>2)</sup> լրագիրներում սկսան յարձակուել, չ'խնայելով մինչև անգամ դպրոցի գոյութիւնը. իսկ դուք շատ էք խնայել Գայիանեան դպրոցի գոյութիւնը ձեր ներկայ տղայամիտ բրօշուրի մէջ: Եւ գտնում է, որ առաջին պատճառը ապահովութիւնն, որ իր խելքով շատերին քաշում է: Երկրորդ տեսչական 30 ուուբլի ուձիկը, ինչպէս այս վերջին անգամ Առաքելեանցը և Գովլաթբէկեանցը ուզում էին ձեռք բերել, սուտ և անխղճ մտանք լուրեր տարածելով Ձաշխտեանի վերայ (աշխարհքի կուրուութեանը նայեցէք): Երրորդ, որ նոր ուսուցիչները իրենց վրայ մեծ կարծիք ունին (որովհետև կուրօրէն չ'խոնարհեցան իրան և իր տգէտ տեսչին):

Վերջապէս Իգմիրեանց հասնում է իր նպատակին. իր ոխը հանում է, ասելով «դուքս գնացող ուսուցիչներին հոգարարձութիւնը սխտի արձակէր եթէ... իրանք չ'դուքս գնային»: (Սև սրտին սպիտակ ատամներ, ուրիշ բան չ'ունէք ասելու) որովհետև պ. Գ. փոխանակ հայրենադիտութեան, պարապել էր մատչմութիւնական աշխարհագրութեամբ, այն էլ բոլորովին խառնուրդոր:

Պ. Իգմիրեանց, ո՞վ է մեղաւոր, որ դուք հայրենագիտութեան մասին սխալ հասկացողութիւն ունենաք և այնպիսի պահանջներ անէք, որ ձեր արբանեակի Ձաշխտեանցն անգամ յիմար է համարում: Ինքը պահանջում էք որ այդ առարկայի ուսուցիչը անցնի, և հայրենագիտութիւն և Փիլիք. մատ. և քաղաքական աշխարհագրութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն և Հայոց պատմութիւն: Եւ ինչու չէք ուզում հասկանալ որ ոչ մի ուսուցիչ չէ կարող անցնել այնպէս խառը, ինչպէս դուք էք հասկանում: Իսկ պ. Ա. կարող ենք ասել (վայ, էն ասելուն) կրօնը անուշաղիք էր

<sup>1)</sup> Չարմանալի բան, ինչու հետո գնալ, պատճառը դուքէք. եթէ դուք սրանից մի տաս տարի առաջ հեռանայիք, այդ դպրոցը Գայիանեանի հետ դուրընթացաբար առաջ կ'երթար:

<sup>2)</sup> Որքան ուրախ կը լինէր պ. Իգմիրեանց, եթէ կարողանայ որևէ հնարքով խափանել այդ լրագիրները, կամ բոլորովին ձեռն լրագրական խօսքը:

Թողել: Ես անցել եմ ինչպէս որ հարկն է, իսկ եթէ դուք 7 տարեկան երեխային հարցրէք <sup>1)</sup> Թէ ինչու համար Աստուած երկնքումն է և ոչ երկրումը, ինչո՞ւ համար Աստուած նշխում են ժամումը, քնթով, մերքով ձեռներով այլն: Կամ Սրբազան պատմութիւնից հարցրեցիք Թէ «Ի՞նչպէս իմացաւ Նոյը, որ խաղողը հարբացնում ա» և հինգ ըօպէի չափ երեխային շմացնելուց յետոյ բացատրեցիք «Մէ՛ գամ Նոյը տեմնու՞մա, որ է՞ծը գնաց խաղող կերաւ ու տրտինգներ ա տալիս, ինքն էլ, գնացելա, ու խաղողի ծվէնին, գինին էլի, խմել ա, ու հարբել, հարբելա դունիս իմ պարուն ու գլղիգլոր ա եկել (ծիժաղ): Այսպիսի ցնդարանական հարցերի բացատրելը միայն Ձեզ ու Ջաշիտովին է տուած, որ նա էլ իրան խորը փիլիսոփայութիւնը ցոյց տալու համար հարցնում է «Ի՞ժում Գրեգոր Իվանիչ, մի աթամ ա լլում: Ես այսպէս վատ եմ անցել, չը նայելով ինձ յանձնած է եղել պարապել ըստ պատուելի հոգաբարձութեան: ա. Ինձ ոչոք բան չէ ասել. երկրորդ ոչ մի հոգաբարձու իրաւունք չ'ունէր ինձ պատուիրելու. պ. Իզմիրեանցը, կարող է պատուէրներ կարգաւ տանը իր խոհարարի իսկ դպրոցում միայն իր խոնարհ տեսչի գլխին: Մինչև անգամ պատուէր բառի գործածութիւնը շատ յանդգնութիւն է և աւելորդ հպարտութիւն: (Գրելիս չափը պէտք է ճանաչել): Բայց դարմանալի է Թէ ասիստէնտ Իզմիրեանցը ինչո՞ւ բան չէ յիշում Հայոց լեզուի և Թուարանութեան (պատրաստականում) քննութեանց մասին, չէ՞ որ ուսուցիչը նոյն Առաքելեանցն էր: Եթէ լաւ անցաւ ինչու չէ գովում եթէ բարեխիղճ մարդ է, իսկ Թէ վատ ինչի՞ չէ բամբասում. նա լռում է. ինչպէս երևում է շատ լաւ է անցել եթէ ոչ նա լռող պտուղ չէ: Պ. Իզմիրեանց մեզ ինչու պիտի արձակէին ո՞ր ծառայութիւնների համար, միթէ ես էն Առաքելեանցը չեմ, որ անցեալ տարի այս միջոցիս «Մեղուի» մէջ ձեր յատուկ ստորագրութեամբ, ինձ առանձնապէս շնորհակալութիւն յայտնեցիք: Եթէ պիտի արձակէին, ուրեմն էլ ինչո՞ւ համար պ. Քամամշեանցը անձամբ եկել էր դպրոց և պ. պ. Մէլիքեանին և Գուլլակեանցին խնդրել, որ ինձ, իբրև ընկերներ համոզեն, որ չը Թողնեմ դասերս, որովհետև գնահատում էր իմ ծառայութիւնս: Եթէ պիտի արձակէր, էլ ինչո՞ւ ուրեմն Թէ իմ և Թէ պ. Դովլաթբէկեանցի հրաժարուելիս ժամերով խնդրում էր հոգաբարձութիւնը, որ շա-

<sup>1)</sup> Ընթերցողները պէտքէ աչքի առաջ ունենան, որ քննութիւնները եղելին մեր հրաժարուելուց յետոյ:

րունակենք, եթէ պիտի արձակէին, և այդ գիտէր Ջաշիտեանց, ինչի՞ նա կէս ժամից աւելի մագերը փետելով լալիս էր և խրնդրում էր որ ես չը հրաժարուեմ: Միթէ ինքը չի խոստովանել, որ ես ծառայել եմ ինչպէս հարկն է, միայն ինձ գովելը աւելորդ եմ համարում: Մեզ արձակելու միտք ոչոք չէ ունեցել, դա հետևանք է միայն կրքի, այն յօգուածից յետոյ, որտեղ ձեր բարբութեան մէջ խառնուեցաւ 7000 ըուրլի: Ես խնարհաբար խրնդրում եմ այն ուսուցիչներին, որոնք կամ իբրև ասեստէնտ կամ կամ իբրև իմ տեղապահ քննութիւն արել իմ առաքիաներից, դուրս դան հրապարակ և յանուն ազնուութեան յայտնեն, նախ՝ Թէ ինչպէս անցաւ քննութիւնները, երկրորդ՝ Քամամշեանց յատուկ իրենց խնդրել է ինձ համոզելու համար, Թէ ոչ. և երրորդ իմ ծառայութիւնս ինչպէս է եղել, գովասանութեան Թէ արձակելու արժանի:

Յետոյ հրապարակաւ առանց կարմրելու ուրանում է (ինչ անամօթութիւն) որ Ջաշիտեանը ոչ անվայել դրութեան մէջ է եկել և ոչ սրով, և էլի կիսով չափ խոստովանում է, Թէկուզ մի սուր էլ ունենար աւազակները դէմ, ինչ մի մեղք բան է (չատ միամիտ էք ձևանում) միթէ ուրիշ անգամ ժողով չէք ունեցել, ինչի՞ սրով չէք գալիս, այն երեկոյ էլ չէր բերել եթէ ուշքը կորցրած անվայել դրութեան մէջ չլինէր - ուրանալ մի կատարուած իրողութիւն չենք հասկանում որ բարեմտութիւնն է: Ձէ՞ որ Ստեփանեանց (հիմի կրքից կուրացած ուրանում է) ժողովքում ամենքի առաջ յայտնեց, նորա խայտառակ դրութիւնը և սրով գալը, իսկ դուք պ. Իզմիրեանց, նրան հրապարակաւ Թէ դպրոցում և Թէ փողոցում մասխարայ շինեցիք, դանազան անուններ տալով, «գնն սօ հարբան Թիւնի, Նացարքէքիայ, և այլն և այլն: Ձէ՞ որ ձեր առաջ էր կրկնում պ- Միլեանեանց նրա խօսքերը «ես Ձերքեզ եմ, Օսի ջնսից եմ, ես կ'.....» Ջաշիտեանի այդ արարմունքը անկարող էք ուրանալ, դա հաստատ փաստ է, եթէ այդ կամ էն 7000 ըուրլին սուտ լինէր, դուք ոչ Թէ կը բաւականայիք բրօշուրով, այլ մինչև հիմիկս վաղուց գործը պրօկուրորին կը հասցնէիք: (Ձեր մեծ գէնքը Սուրէբնի ուստափներն է): Իսկ ինչ վերա բերում է իմ, իբր Ջաշիտեանցին <sup>1)</sup> ուսուցչական սենեակում անպատուելուն (յունիսի 4-ն)

<sup>1)</sup> Լսեցի, որ Ջաշիտեանց ամենքին խարումէ հաւատացնելով, որ ինձանից մի տոմսակ ունի սպառնալիքներով լի: Եթէ ազնիւ մարդ է Ջաշիտեանցը Թող հրատարակէ իմ տոմսակի բովանդակութիւնը:

3

կատարեալ սուտ է և զբարարութիւն, ամօթ չէ՞ այդպիսի մեծոց-  
ներին դիմել: Ես ինչպէս կարող էի յունիս 4-ն անպատուել, քա-  
նի որ իմ թղթից էլ երևում է ես հրաժարուել եմ մայիսի 8-ին.  
այժմ դուք ինքներդ կարդացէք և խղճահարուեցէք: Նմանա-  
պէս անխղճ զբարարութիւն է, իբր թէ պ. Դովլաթբէկեանց ե-  
րեխանց ծեծելիս է եղել և այդ էլ սպացուցուած է խառը ժո-  
ղովով. չէ՞ կարելի յայտնել երբ, և թր խառն ժողովով, միքեր  
կային, ո՞վ սպացուցեց և ինչ օրագիր կազմեցին դրա մասին,  
ինչքան մեզ յայտնի է այդպիսի ժողով չէ կազմուել, իսկ եթէ պ.  
Իզմիրեանց և Ջաշտեանց, երկուսով են կազմել այդ ժողովը և  
սպացուցել, այդ կարող են ուրիշներն համար կոպէկ չ'արժէ:  
Իսկ ինչ վերաբերում է նրան, որ հոգաբարձութիւնը ուրախու-  
թեամբ կ'ընդունէր, Ջաշտեանցի աղջկան, եթէ համալսատա-  
սան լինէր գործին, որովհետև դրանով կը վերջանար օտարների  
ինտրիգաները: Շատ մշմարիտ է. և հարկէ, Իզմիրեանց հոգաբար-  
ձու, կինը կարերի վերահասու, քրոջ աղջկիւր վարժուհի: Ջաշ-  
տեանց տեսուչ, — աղջկիւր վարժուհի, այսպիսի կարգադրութեամբ  
զարցող իրանց կ'սեպհականէին, աւելի լաւ կ'անէին եթէ մաս-  
նաւոր շնէկն և անունն էլ փոխէին, նոր ֆիրմայի տակ. «ИЗМИРО  
— ДЖАШИТОВСКОЕ УЧИЛИЩЕ» Յետոյ յոյս է յայտնում, որ ժողովուր-  
դը չի հաւատալ շահասէր մարդկանց գրածներին, և կը փարատի  
ըր կասկածը. եթէ որեւիցէ ձեռով մտել է նորա սերտը: Բայց շատ  
սխալ է, այդ տղայամետ գրուածքով ամենեւին չ'արդարացաք, ո-  
րովհետև չէք հերքում մեր գրածները Ջաշտեանցի վերաբերու-  
թեամբ որևէ կրկնում ենք, Ջաշտեանց անհամապատասխան  
է նախ իբրև ուսուցիչ, որովհետև թուրքախոսութիւնը դասէ  
տալիս ամենափոսած ձևով, իսկ Ռուսերէն ինքնէլ չէ իմա-  
նում: Երկրորդ իբրև տեսուչ անարժան է իր կոչմանը, որովհետև  
տեսչութիւն չէ արել, դրա տեսչութիւնը, ինչպէս ասել ենք,  
եղել է կաւիճ ու թուղթ գնելը, կոպիլը, վարժուհիներին բար-  
բարոսաբար անպատուելը և լացեցնելը, դարցող իր վաշխառու-  
թեան գրասենեակ շնէլը և այլն: Ջաշտեանցին պէտք է արձակել,  
թէ իբրև անբարեշտ մարդ և թէ իբրև տգէտ տեսուչ: Մեթէ  
կարելի է պաշտպանել մի Ջաշտեանց, որը գուրդ տեսուչ հայ  
դպրոցում մի բառ հայերէն գրել չէ իմանում: — Ահա նրա հայե-  
րէն գրութիւնը, մի անգամ ցուցակում նա գրել է այսպիսի նկա-  
տողութիւն: «արցակեալ է վասն զի գալու պատճառով իսկ եթէ  
կամենայ նորից ունդուելիլ պարտ է տալ արանցին քննուելութիւն:»

Վերջացնելով իմ սրտասխանս, պնդում եմ, որ հոգաբար-  
ձութիւնը, քաջ համոզուած է, Ջաշտեանի բոլոր պակասութեան  
մէջ, բայց պաշտպանում է նրան, որովհետև նրա արձակելում տես-  
նում է և իր վերջը, որովհետև եթէ դրա տեղ հրաւիրուի մի օրի-  
նաւոր մարդ, անպատճառ չէ կարող տանել Իզմիրեանցի արարքին  
և բարձրաձայն հոգաբարձական ընտրութիւն կը գոչէ:

Հոգաբարձական ընտրութիւնը, որը պ. Իզմիրեանցի սրտին  
խիտ է քայքայում, շատ կարևոր է, այդ պահանջում է դպրոցի  
օգուտը: Որովհետև նախ՝ Հէջուբեանց (հոգաբարձու) վախճանուե-  
ցաւ մի ձայնը պակաս է պէտք է լրացնել, երկրորդ նախագահ  
Տէր Գէորգը շարունակ տկար է <sup>1)</sup> այս յայտնի է և հոգևոր իշխա-  
նութեանը, տարին մի անգամ հագլու դպրոցի երես է տեսնում,  
եկած ժամանակն էլ քունը տանում է նրա նախագահութիւնը լոկ  
ձեական է Յ-րդ Ստեփանեանց ինքն էլ ուրախ չէ որ հոգաբար-  
ձու է, իսկ եթէ մնում է իր պաշտօնի մէջ պատճառն այն է, որ  
հոգաբարձութեան հետ կապուած է մի այնպիսի քաղցր պաշտօն,  
որի ձեռնաթօղ անելը շատ ցաւալի է, այդ պաշտօնը, Նորաչին  
եկեղեցում 14 տարուայ կօնդախտով երկցիփոխանութիւնն է: Եթէ  
յիշում է պ. Ստեփանեանցը անցեալ տարիներում, իրան փոխում  
էին, բայց խնդրեց, որ եթէ կարելի է թողնեն կրկին շարունակէ  
ըր պաշտօնը մինչև 1882 թ. Յունվարը: Այդ Յունվարն էլ անցաւ  
բայց Ստեփանեանց փոխուելու մասին ամենեւին չէ էլ մտածում:  
Պարոնի վարմունքից, ակամայ, մարդ զալիս է այն եզրակացու-  
թեանը, որ եթէ մի օգուտ չը լինի ինչու համար մարդ չանձն  
կառնի ձրի պաշտօն կ ա տ ար ե լ 14 տարի, և փոխուելիս էլ  
լացը կը գայ. . . . .

Սրա հոգաբարձութիւնը միանգամայն վնասակար է դպրոցին,  
որովհետև ուսումից գուրկ, մի մարդ է և ուսումնական գործերի  
վերաբերութեամբ իր սեպհական հայացքները չունենալով կատա-  
րելապէս կոյր գործեր է Իզմիրեանցի համար: Ուրեմն սրան էլ  
կարելի է խնդրել, որ շնորհքը պակասեցնէ, խոստանալով, որ  
երեցիփոխանութիւնը էլն իրանը լինի, եթէ ոչ . . . . .

Ինչ վերաբերում է պ. Թամամշեանցին, վերջինս վաղուց գգու-  
ել է այդ դպրոցում տեղի ունեցած ինտրիգաներից և դասատանա-  
կան սրօցէսներից, մանաւանդ բաւական համարելով իրանց (բացի


<sup>1)</sup> Սյս այն տէր Գէորգ քահանան է, որի վրայ 2 րդ դիմնադիայի աշա-  
կերտները գանդատուել էին թէ իրենց բան չէ սովորեցնում:



Հիւանդադարձ նախագահից) տասնեակ տարիներով ծառայութիւնը վաղուց և վեր ընտրութիւն է դոչում: Մնում է մի հոգաբարձու, խաղաղասէր մի անձն Իգմիրեանց, որը օգուտ քաղելով հոգաբարձական տարտամ կազմակերպութիւնից դարոցին տէր է դարձել, և մինչև մահը անփոփոխ մնալու կօնտրակտի համար, իր եղբոր տունը, ընծայելու գերմակի տակ ծախել է: Այսպիսի ազդասիրութիւնից յետոյ Իգմիրեանցը, կտակի պօրութեամբ, իր տան կուժն ու կուլով մինչև Քրիստոսի ահեղ դատաստանը և հաշուէտութիւնը անփոփոխ պատուաւոր հոգաբարձու է: Եթէ հանգուցեալ Հէջուրեանի և ներկայ նախագահ-Տէրտէրեանի, և հոգաբարձու Ստեփանեանի տեղ՝ ընտրուին են գործին տեղեակ մարդիկ՝ այն օգուտը կունենայ, որ թէև Իգմիրեանցը գանազան միջոցներով կրկին ընտրուի հոգաբարձու, այլ ևս չէ կարող այդպէս հեշտ ու հանգիստ դարոցը դռնէլ իր «ես» ին և Ջաշխտեանի ամեն անարժանութիւնները տեսնելուց յետոյ, պաշտպանել, որովհետև իրան խոնարհ է, և իրան նման ասում է նորութիւններ, (կարծում ենք, որ Ջաշխտեանցը մոռացած չի լինիլ. թէ ինչ բառերով անպատուեց կաշանալի Ուսուցչական ժողովը և նրա կարգադրիչ յանձնաժողովի նախագահին և անդամներին, ինչ անականներ յատկացրեց, երբ որ մէկը իրան ասաց, որ ինքը պիտի իր ուսումնարանում մտցնի այն պրօգրամը, որ կը պատրաստէ Ուսուցչական ժողովը): Կամ ինքնիշխան կերպով պատուական օրերդներին գգուացնելուց յետոյ (օր. օր. Տէր Մովսէսեանց և Յուստիանէ) բերել իր քրոջ աղջկան, ուսուցչուհի և վարժուհի կարգել, հայ դարոցում, որը մի բառ հայերէն չէ իմանում, և այսօր էլ երեխանց հետ վրացերէն է խօսում, իսկ ուրա լեզուից բառերը հայերէնի տեղ վրացերէն է թարգմանում: Այս բոլորը յայտնելուց յետոյ՝ դարձնում ենք պ. Թեմական տեսչի և հոգևոր իշխանութեան խորին ուշադրութիւնը:

Բ. Առաքելեանց

45249



Дозволено цензурою. Тифлисъ. 6 Сентября, 1882 г.  
Типографія И. Мартиросіанца. Орбеліан. ул., 5

